# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱՆԴՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ

## ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1027-ԱՄՅԱԿԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Մարգահովիտ բնակավայրի սիրելի՛ բնակիչներ, իմ և ողջ համայնքի անունից շնորհավորում եմ բոլորիդ Մարգահովիտի 1027-ամյակի կապակցությամբ:

Այս տարիների ընթացքում ձեր չքնաղ և ծաղկուն բնօրրանը շարունակել է լինել համայնքի կենսական կարևորագույն նշանակություն ունեցող մասը:

Մեր միասնական ջանքերի շնորհիվ այն շարունակել է զարգանալ, դառնալ համայնքի տնտեսական և մշակութային կյանքի զարկերակը:

Մարգահովիտի հազարամյա պատմությունն ապացույցն է ձեզանից յուրաքանչյուրի ամենօրյա տքնաջան աշխատանքի, որն ուղղված է ձեր տան և համայնքի զարգացմանը:

Մարգահովիտն իր դարավոր կյանքի ընթացքում տվել է այնպիսի սերունդներ, ում հարկի տակ հյուրընկալվելը պատիվ է եղել յուրաքանչյուր հայի համար, եղել է մեր երկրի պատմամշակութային կյանքի անբաժանելի մասը:

Սիրելի՛ բնակիչներ, մեկ անգամ ևս շնորհավորում եմ բոլորիդ այս կարևոր օրվա կապակցությամբ:

Շարունակեք համախմբվել ձեր տունը շենացնելու գաղափարի շուրջ, ապրեք և արարեք խաղաղության մեջ:

Հարգանքներով՝ Սուրեն Կոստանդյան